

6. Հայոց լեզու, գրականություն. հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր (կազմողներ՝ Հովսեփյան Լ. և ուրիշներ), Եր., «Անտարես», 2007, 88 էջ:

7. **Սարուխանյան Ս. և ուրիշներ**, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, ԿԱԻ, 2008, 101 էջ:

8. **Սանուկյան Ա.**, Բանավոր խոսքի զարգացումը հայոց լեզվի ուսուցման ընթացքում, «Լույս», Եր., 1976, 347 էջ:

9. **Выготский Л. С.**, Собрание сочинений, том 2, Мышление и речь, Лекции по психологии, М., Педагогика, 1982, 502 с.

## ОБОГАЩЕНИЕ СЛОВАРНОГО ЗАПАСА УЧАЩИХСЯ КАК СРЕДСТВО ЯЗЫКОВОГО МЫШЛЕНИЯ

*В. Д. Хачатрян*

В статье рассматривается проблема развития языкового мышления. Нами предложены примеры языковых упражнений, игр, способствующих развитию языкового мышления. Представлены образцы уроков, организованных по современным /интерактивным/ методам. Такой урок будет способствовать развитию связной речи учащихся, воображения, языкового мышления.

## THE ENRICHMENT OF LEARNERS' VOCABULARY AS A WAY OF DEVELOPING LINGUISTIC THINKING

*V. D. Khachatryan*

The problem of the development of linguistic thinking is touched upon in this article. The examples of language exercises and games that promote the development of linguistic thinking, are given. Also an example of a lesson, organized by modern / interactive/ methods is presented, which promotes the development of the learners' coherent speech, imagination and creative abilities, as well as the linguistic thinking.

## ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲԱՂԱԴԴԻՉՆԵՐԸ

**Ա. Վ. ԴԱՎԹՅԱՆ**

*Խ. Աբովյանի անվան ՀԴՄՀ, ԳԴՀ դասախոս*

**Աշխատանքը չի խայտառակում մարդուն,  
դժբախտաբար պատահում են աշխատանքը խայտառակող մարդիկ:  
Գրանտ**

Մարդու մասնագիտական ընտրության կազմակերպման և մասնագիտական պիտանելիության գնահատման պատմության մասին մեզ տեղեկություններ են հասել դեռևս շատ վաղ ժամանակներից: Դրանք հիմնականում վերաբերում են մասնագիտությանն առնչվող գիտելիքների, կարողությունների և ընդունակու-

թյունների որոշման միջոցներին: Դեռևս մ.թ.ա. 3-րդ հազարամյակում հին Բաբելոնում գրագիրներ պատրաստող դպրոցներ ավարտողներն անցնում էին լուրջ փորձություններ: Օրինակ՝ մասնագիտական լուրջ պատրաստվածության շնորհիվ Մեսոպոտամի քաղաքակրթության գրագիրները համարվում էին կարևոր դեմքեր: Նրանք կարողանում էին չափել տարածությունը, բաժանել ունեցվածքը, երգել, նվագել երաժշտական գործիքների վրա և այլն: Փորձությունների ժամանակ ստուգվում էր նրանց կտորեղենի, մետաղների, բույսերի տեսակների ճանաչողությունը, հանրահաշվական գործողությունների իմացությունը և դրանց կիրառման կարողությունները:

Չինաստանում այդ նույն ժամանակներում տարածված էր կառավարական ծառայողի մասնագիտությունը և պաշտոնը: Ուստի այստեղ նույնպես գործում էր այդ պաշտոնի համար մասնագետի ընտրության հատուկ կարգ: Այս ընտրությունը մի յուրօրինակ տոնական արարողություն էր, որով կարծես ողջունում էին այդ պաշտոնին հավակնող համարձակ երիտասարդներին: Քննության այս «նախատիպի» թեմաները ընտրում էին կայսրերը, որոնք իրենք էլ անցկացնում էին գիտելիքների ստուգումը՝ բազմաստիճան մրցակցային ընտրության վերջնական փուլում:

Այսօր մասնագիտական կողմնորոշումը ներառում է ոչ միայն մասնագիտական պիտանելիությունը, այլ նաև մասնագիտական լուսավորումը, խորհրդատվությունը, մասնագիտական կողմնորոշումը և մասնագիտական դաստիարակությունը, որը ձևավորվել է շատ ավելի ուշ՝ արտադրական հասարակարգի զարգացմանը զուգընթաց: Արտադրական գործընթացների ինտենսիվ զարգացումը թելադրում է աշխատողների մասնագիտացման դերի ու պատրաստվածության անհարաժեշտություն, որն էլ, իր հերթին, առաջ բերեց աշխատուժի մասնագիտական ուսուցման, աշխատանքային գործընթացների բաշխման անհրաժեշտություն՝ ըստ մարդկանց ընդունակությունների և կարողությունների:

1908թ. հունվարին Բոստոնում սկսեց իր աշխատանքը երիտասարդների մասնագիտական կողմնորոշման առաջին բյուրոն, որի գործունեությունը ուղղված էր օգնելու դեռահասներին՝ մասնագիտական ընտրության և աշխատանքային ուղին որոշելու հարցերում: Այս բյուրոյի գործունեությունն էլ ընդունված է համարել մասնագիտական կողմնորոշման սկիզբը: Հետագայում նման բյուրո հաստատվեց Նյու-Յորքում, որի խնդիրներից էր տարբեր մասնագիտությունների կողմից մարդուն առաջադրվող պահանջների ուսումնասիրությունը: Այն իր գործունեությունը ծավալում էր ուսուցիչների հետ համագործակցության միջոցով, կիրառում տարբեր թեստեր, անկետաներ: Նրանց փորձը լայն տարածում գտավ ԱՄՆ-ում, Իսպանիայում, Ֆինլանդիայում և այլուր:

Այսօր երևանում գործում է «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոնը», որն իր գործունեությունը ծավալում է՝ ելնելով ՀՀ պետական և տնտեսական առանձնահատկություններից և աշխատաշուկայի պահանջներից:

Մասնագիտական կողմնորոշման գլխավոր նպատակն է օգնել սովորողներին որպեսզի նրանք դպրոցն ավարտելուց հետո կարողանան գիտակցաբար ընտրել այս կամ այն մասնագիտությունը՝ ելնելով իրենց հոգեկան, ֆիզիոլոգիական առանձնահատկություններից, աշխատաշուկայի պահանջարկից և տվյալ մասնագիտության հասարակական նշանակությունից: Այն սոցիալ-տնտեսա-

կան, հոգեբանամանկավարժական, բժշկակենսաբանական և արտադրատեխնիկական ծրագրավորված միջոցառումների համակարգ է, որը նպատակ ունի հանրակրթական դպրոցի շրջանավարտին օգնելու գիտակցաբար ընտրելու իրեն համապատասխան և հարմար մասնագիտություն:

Մասնագիտության ընտրության հիմունքներին ծանոթ լինելը մասնագիտական ընտրության կարևորագույն պայմաններից է: Այս գիտության հիմնական հասկացություններն են.

**Մասնագիտությունը**, որը որոշակի պատրաստություն պահանջող աշխատանք, գործունեություն կամ զբաղմունք է: Մասնագիտությունը կարող է բաժանվել մի քանի ենթամասնագիտությունների՝ մասնագիտացումների: Օրինակ՝ ուսուցիչը կամ մանկավարժը մասնագիտություն է, իսկ դրա մասնագիտացումներն են՝ մաթեմատիկայի, ֆիզիկայի ուսուցիչ, կամ բժիշկինը՝ ատամնաբույժ, վիրաբույժ, թերապևտ, իրավաբանինը՝ դատախազ, դատավոր, դատապաշտպան և այլն:

**Մասնագիտական կողմնորոշումը** հոգեբանական մանկավարժական, բժշկական և այլ միջոցառումների համակարգ է, որի նպատակն է օգնել երիտասարդությանը՝ մասնագիտական ընտրության գործում:

**Պրոֆեսիոգրամը** տվյալ մասնագիտության սոցիալ-տնտեսական, պատմական, արտադրատեխնիկայի, սանիտարահիգիենիկ, ֆիզիոլոգիական, հոգեբանական և մանկավարժական յուրահատկությունների բնութագիրն է, այն պահանջների նկարագիրը, որոնք ներկայացվում են տվյալ մասնագետին:

**Պսիխոգրաման** պրոֆեսիոգրամի բաղկացուցիչ մասն է, այսինքն՝ մասնագետի և մասնագիտության հոգեբանական վերլուծությունը: Հոգեբանորեն հասկանալ մասնագիտությունը՝ չի նշանակում սահմանափակվել նրա միայն հոգեբանական հատկությունների սահմանմամբ: Պետք է գտնել այն առանցքը, որի շուրջ միավորվում են առանձին հատկությունները, այսինքն՝ բացահայտել մասնագիտության կարևոր հատկությունների բուն էությունը:

**Մասնագիտության ճիշտ ընտրության պայմաններ** ասելով նկատի ունենք անձի հետաքրքրությունները, ընդունակությունները, պրոֆեսիայի կողմից անհատին ներկայացվող պահանջները, ժողտնտեսության կողմից կադրերին ներկայացվող պահանջները:

**Մասնագիտության ընտրության դրդապատճառները** մասնագիտության ընտրության պահանջմունքի հիմնական շարժիչ ուժերն են: Մասնագիտության ընտրությունը կատարվում է մի քանի դրդապատճառների ներգործությամբ, որոնցից մեկը տվյալ անձի համար առավել կարևոր նշանակություն է ստանում:

**Մասնագիտական հետաքրքրությունը** անձի հուզական երանգավորված վերաբերմունքն է մասնագիտության նկատմամբ:

**Պրոֆեսիոնալ մտադրությունը** այնպիսի նպատակադրումն է, որն անձն ունենում է մասնագիտության ընտրության գործընթացում: Այն լինում է հաստատուն կամ տատանվող, իսկ որոշ դեպքերում էլ նույնիսկ կարող է դադարել կամ բացակայել:

**Մասնագիտական պիտանելիությունը** մարդու հոգեֆիզիոլոգիական անհատական հատկությունների համապատասխանությունն է տվյալ մասնագիտության պահանջներին: Մասնագիտական պիտանելիության տարրերից են՝ առող-

ջական վիճակը, ֆիզիոլոգիական (կազմախոսական) առանձնահատկությունները:

**Մասնագիտական ընտրությունը** տվյալ մասնագիտության համար ամենից ավելի համապատասխանող հոգեկան և ֆիզիոլոգիական որակների բացահայտման հիման վրա կատարված մասնագիտության ընտրությունն է: Ընտրությունը պետք է կատարել ըստ բժշկական, հոգեբանական և ֆիզիոլոգիական ցուցանիշների, սոցիալական չափանիշների ու ֆիզիկական պատրաստվածության մակարդակի:

**Մասնագիտական խորհրդատվությունը** մասնագետների օգնությամբ մասնագիտության ընտրության հարցի վերաբերյալ ցուցումների, հետազոտությունների ու աջակցության համակարգն է: Խորհրդատվությունները լինում են՝ հոգեբանամանկավարժական, բժշկական, տեղեկատվական և այլ բնույթի:

*Հոգեբանական, սոցիալ-մանկավարժական* խորհրդատվությունը օգնում է ընտրել առավել համապատասխան մասնագիտություն՝ հետաքրքրությունների, ընդունակությունների, հոգեկան, ֆիզիոլոգիական հատկությունների նկատմամբ ներկայացվող պահանջների տեսանկյունից:

*Բժշկական խորհրդատվությունը* պարզում է տվյալ անձի առողջական պիտանելիությունը՝ այս կամ այն մասնագիտությամբ աշխատելու համար:

*Տեղեկատվական խորհրդատվությունը* պարզաբանում է, թե ինչպիսի պատրաստվածություն է անհրաժեշտ տվյալ մասնագետ դառնալու համար, որտեղ կարելի է ստանալ այդ մասնագիտությունը և որտեղ՝ աշխատել:

**Մասնագիտական հիվանդություններն** այնպիսի հիվանդություններ են, որոնք առաջանում են մասնագիտության վնասակար ազդեցությունների հետևանքով:

**Մասնագիտական ադապտացիան** անձի հարմարվելն է իր ընտրած մասնագիտությանը: Այն ընթանում է 2 փուլով: Առաջինն անցնում է մասնագիտական ուսումնական հաստատությունում, երկրորդը՝ արտադրության մեջ (պրակտիկայում):

Մասնագիտությանը նաև զբաղմունք է, գործունեության տեսակ, որը պահանջում է հատուկ պատրաստվածություն, որով մարդը զբաղվում է նաև իր կենսական գոյության և նյութական ապահովման համար:

Մասնագիտության գիտական նկարագիրը ենթադրում է ինչպես արտաքին պայմանների, այնպես էլ ներքին գործոնների, այսինքն՝ մասնագետին հատուկ հոգեբանական գործընթացների ու վարքի վերլուծություն:

Պրեֆեսիոգրաֆիկ հետազոտությունների հիմնական բաղադրիչներն են՝

- արտադրական գործընթացի հետ ընդհանուր ծանոթությունը, դրա առավել մանրակրկիտ ուսումնասիրությունը;
- կոնկրետ աշխատանքի վայրի, տեղի նկարագիրը, ինչպես նաև տվյալ վայրում աշխատողի հոգեբանական նկարագիրը;
- աշխատանքային գործընթացի հոգեբանական, ֆիզիոլոգիական, մարդաբանական վերլուծությունը;
- աշխատանքային գործունեության փուլային վերլուծությունը;
- աշխատանքային օրվա լուսանկարում՝ խրոնոմետրաժը;
- անհատական գործունեության ձևի ուսումնասիրությունը;

- աշխատանքի սանիտարահիգիենիկ պայմանների ուսումնասիրությունը;
- սխալ գործունեության հնարավոր ձևերի ուսումնասիրությունը;
- աշխատունակության դինամիկան՝ աշխատանքային օրվա, շաբաթվա կամ ավելի երկար ժամանակահատվածի կտրվածքով:

Մասնագիտությունը ներկայացնելու համար օգտագործում են պրոֆեսիոգրամներ, որոնք պարունակում են հետևյալ տեղեկությունները.

**1. Մասնագիտության անձնագիր՝**

- մասնագիտության տեսակը և ոլորտի պատկանելությունը,
- կրթության և որակավորման մակարդակները,
- հարակից կամ ինտեգրացված մասնագիտություններն ու մասնագիտացումները,

- սոցիալ-մասնագիտական սահմանափակումները;

**2. Կադրերի պատրաստումը՝**

- մասնագիտական կրթության ձևերն ու մակարդակները,
- որակավորման մակարդակը,
- մասնագիտական աճի և կարիերայի հեռանկարները;

**3. Մասնագիտական կայացման յուրաքանչյուր փուլում առաջատար գործունեության ձևի բնութագիրը (գիտենալ, կարողանալ, տիրապետել)՝**

- գործառույթները,
- գործունեության կոնկրետ ձևերը,
- մասնագիտական խնդիրների տեսակները,
- մասնագիտական կարողությունները;

**4. Մասնագիտության ուրվագծում.**

- առաջատար գործունեության ձևը;
- գործունեության սուբյեկտի հիմնական ենթակառուցվածքները՝
  - մասնագիտական ուղղվածությունը,
  - մասնագիտական իրազեկվածությունը,
  - մասնագիտական կարևոր որակները,
  - մասնագիտորեն կարևոր հոգեֆիզիոլոգիական որակները,
  - անձի յուրաքանչյուր բաղադրիչի հոգեբանական բնութագիրը (սոցիալական, գենդերային, իրավական),
  - աշխատանքի սանիտարահիգիենիկ պայմանները,
- աշխատանքի ռեժիմը,
- նյարդահոգեբանական լարվածությունը,
- զգայաշարժողական և ընկալման ոլորտները,
- բժշկական հակացուցումները:

Սովորաբար նույն մասնագիտության մարդիկ ունենում են ընդհանուր հետաքրքրություններ, հմտություններ, գիտելիքներ: Մասնագիտությունը նաև յուրատիպ գիտելիքների, հմտությունների, կարողությունների մի համակարգ է, որը հատուկ է այդ մասնագիտությամբ զբաղվող յուրաքանչյուր մարդու: Այդ դեպքում ասում են. «Նա տիրապետում է մասնագիտությանը»:

Եվ վերջապես՝ մասնագիտություն կարող են կոչել հասարակությանը անհրաժեշտ և մարդու ֆիզիկական ու հոգևոր ուժերի ներդրման այն ոլորտը, որը տալիս է նրան գոյության և զարգացման հնարավորություն: Մասնագիտությունների

աշխարհը փոփոխական է. մարդիկ ստեղծում են նոր մասնագիտություններ, միավորում, տարանջատում հները: Սա պայմանավորված է պատմական ժամանակափուլի առանձնահատկություններով: Սակայն կարևորն այս հարցում խորապես գիտակցելն է, որ յուրաքանչյուրի մասնագիտական ճիշտ ընտրությունից շահում է առաջինը՝ անձը, ապա՝ նրա շրջապատը, իսկ ամենակարևորը՝ հասարակությունն ու պետությունը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Зеев З. Ф., Павлова А. М., Садовникова Н. О.* Профориентология, М., Екатеринбург., 2006.
2. *Пряжников Н. С.* Методы активизации профессионального и личного самоопределения, М., Изд. НПО «Модэк», 2002.

#### КОМПОНЕНТЫ ПРОФОРИЕНТАЦИОННОГО ПРОЦЕССА

*А. В. Давтян*

Профессиональная ориентация - комплекс психолого-педагогических и медицинских мероприятий, направленных на оптимизацию процесса трудоустройства молодежи в соответствии с желаниями, склонностями и сформировавшимися способностями и с учетом потребности в специалистах народного хозяйства и общества в целом».

Актуальность проблемы профориентации как общественной проблемы проявляется в необходимости преодоления противоречия между объективно существующими потребностями общества. То есть по своему назначению система профориентации должна оказать существенное влияние на рациональное распределение трудовых ресурсов, выбор жизненного пути молодежью, адаптацию ее к профессии.

Адекватность выбора и уровень освоения профессии влияют на все стороны и общее качество жизни. Поэтому одним из центральных и в этом смысле судьбоносных в жизни каждого человека, в его профессиональной карьере, является вопрос о поиске, выборе и овладении профессией. Возросшие требования современного производства к уровню профессиональной подготовленности кадров в еще большей степени актуализируют проблемы профессиональной ориентации молодежи.

#### COMPONENTS OF THE PROFESSION CHOICE PROCESS

*A. V. Davtyan*

The main aim of the professional orientation is to help the school graduates to knowingly choose one or another profession based on their psychological, physiological features, demand in labor market and the public importance of that profession. It is a complex of socio-economic, educational and psychological, medical and biological planned measures, which aims to help the comprehensive school graduate to choose a profession both appropriate and suitable.